

տարածելու իր շուրջը, ընդունակութիւնն ունի ասպատակ խմբեր կազմելու ու իրեն հնազանդեցնելու կամ հրահանգելու: Նա աստիճանաբար Քիւրդ ժողովուրդի մէջ անուն կը հանէ, մեծ կը դառնայ, ու իր ներկայի մեծութիւնը կը գերազանցէ ծագումնային անցեալ մեծութենէն: Այսպէս է որ անհամար ասպատակ պէյեր և իշխողներ կը բազմանան Քիւրդ ցեղերու մէջ, և աւերներ կը գործեն, առաջինը՝ մին միւսի ասպարէզը խլելու, երկրորդը՝ խաղաղ ժողովուրդի աշխատանքը վայելելու համար իբր եկամուտի ժառանգութիւն:

Պէտիր-Խան պէյը Մոկաց բերդերու վրայ քայելու ժամանակ կը կոռէր քիւրդ ու հայ արշաւողներով. Ապտալ պէյը իր բերդերէն կը պատասխանէր հայ և քիւրդ պաշտպանեալներով: Հայերը Տէրէ-պէյական այս կռիւներու մէջ մեծ փրասներ կը կրէին, թողնելով արհեստ ու հողագործութիւնը, և մանկով ասպատակի կամ ասպատակութեան ենթակայ դրութեան մէջ՝ բռնի:

Պէտիր-Խան պէյը այսպէս ծաւալուելով ծաւալուելով կ'ասպատակէր մինչ Վան, անոր բանակը կազմուած էր առաւելապէս Դըհի հայերէն ու Պօհտանի Քիւրդերէն:

Օսմանեան կառավարութիւնը որ Տէրէ-պէյութիւնները պահպանելով նուաճումները զսպուած կը համարէր, նկատի ունենալով Տէրէ-Պէյիներու իրար հետ ունեցած հակառակութիւնները, պատերազմները, ու սահմանէ սահման անցնելու անկարողութիւն կամ դժուարութիւնը, յանկարծակիի կու գայ, երբ կը տեսնէ Պէտիր-Խան պէյը, ջնջած կամ իրեն միացուցած չրջակայ Տէրէ-պէյիները, առաջ կ'երթայ չրջանէ չրջան, կազմելով միասպաղաղ մի Քիւրդական իշխանութիւն, անմիջապէս զինուորական բանակ կը կազմէ և արշաւանքի կը սկսի անոր դէմ:

Օսման փաշայի հրամանատարութեամբ Օսմանեան զօրքը

(*) Պէտիր-խան պէյի ասորական կոտորածի մասին կարդալ «Այժմեայ Քիւրդիստանը» և «Պատերազմէն յետոյ Շէյխ Ուպէյտուլլահ իբր քաղաքական գործիչ» հատուածները: